

Հաստատված է
 ՀՀ փաստաբանների պալատի
 խորհրդի 05.08.2020թ. թիվ 16/13-Լ
 որոշմամբ



խորհրդի նախագահ՝

Արա Զոհրաբյան

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՀԱՎԱԿՆՈՐԴՆԵՐԻ ՌԻՍՈՒՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՈՒՂԵՆԻՇՆԵՐ

I. Ընդհանուր դրույթներ

1. «Փաստաբանության մասին» օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի և 45.4-րդ հոդվածի 4-րդ մասի 4-րդ կետի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ ՀՀ փաստաբանների պալատ**) կանոնադրության 16.5-րդ կետի 26-րդ ենթակետի պահանջներին համապատասխան, սույն ներքին իրավական ակտով սահմանվում են փաստաբանների վերապատրաստման և հավակնորդների ուսուցման ծրագրերի ուղենիշները (**այսուհետ՝ Ուղենիշներ**):
2. Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ ՀՀ փաստաբանների պալատ**) աշխատակազմը վերապատրաստման դասընթացների ծրագրերը սահմանում է հիմք ընդունելով Ուղենիշները:
3. «Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամի (**այսուհետ՝ ՀՀ փաստաբանական դպրոց**) կառավարման խորհուրդը հաստատում է փաստաբանների վերապատրաստման և հավակնորդների ուսուցման ծրագրերը (պլանները) հիմք ընդունելով Ուղենիշները:

II. Փաստաբանների վերապատրաստում

4. ՀՀ փաստաբանների պալատում և ՀՀ փաստաբանական դպրոցում վերապատրաստման ծրագրերը պետք է համապատասխանեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և փաստաբանական գործունեություն իրականացնելու կարիքներին:
5. Փաստաբանների վերապատրաստման ծրագրերի պլանը կազմվում է յուրաքանչյուր ամսվա համար, որը ներառում է վերապատրաստման դասընթացների թեմաները և ժամանակացույցը:
6. Փաստաբանների վերապատրաստման ծրագիրը պետք է ներառի նաև դասընթացի անվանումը, թեմաները, ժամաքանակը:
7. ՀՀ փաստաբանների պալատը կարող է փաստաբանների

վերապատրաստման համար սահմանել պարտադիր և կամընտրային դասընթացներ:

8. ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմը և ՀՀ փաստաբանական դպրոցը յուրաքանչյուր տարվա համար պետք է կատարեն վերապատրաստման դասընթացների գնահատում՝ վերապատրաստվող փաստաբանների շրջանում հարցումներ կազմակերպելու միջոցով:

III. Փաստաբանների հավակնորդների ուսուցում

9. ՀՀ փաստաբանական դպրոցում փաստաբանների հավակնորդների (**այսուհետ՝ Ունկնդիրների**) ուսուցումը պետք է կազմակերպվի այնպես, որպեսզի դրա արդյունքում վերջիններս ստանան փաստաբանի մասնագիտությամբ աշխատելու համար անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ:
10. ՀՀ փաստաբանական դպրոցի ուսումնական ծրագրերը (պլանները) պետք է կազմվեն մասնագիտական ուղղվածությանը համապատասխան, սահմանեն ուսումնական գործընթացի ժամանակացույցը, տեսական ուսուցման փուլում ուսումնասիրվող պարտադիր և կամընտրային դասընթացները, գործուսուցման տևողությունը: Որակավորման քննությանն առնչվող ծրագրերի դասընթացները պարտադիր են:
11. ՀՀ փաստաբանական դպրոցում հիմնական դասընթացները բովանդակային առումով առավելապես չպետք է կրկնեն համալսարանական (ակադեմիական) առարկաները և պետք է իրավակիրառական բնույթ ունենան:
12. Ունկնդիրների առարկայական ծրագիրը պետք է ներառի նաև դասընթացի անվանումը, թեմաները, ժամաքանակը, ակնկալվող ուսումնական արդյունքը:
13. ՀՀ փաստաբանական դպրոցում պետք է կիրառվեն դասավանդման այնպիսի մեթոդներ և միջոցներ, որոնք կապահովեն ուսումնական գործընթացի բարձր որակ և արդյունավետություն:
14. Ունկնդրի ուսումնական բեռնվածությունը ներառվում է՝ դասախոսությունները, գործնական և անհատական պարապմունքները, գործուսուցման փուլում նախատեսված սիմուլյացիոն դատավարությունները և հոգեբանական վարժանքները, իրավակիրառ աշխատանքի կատարումը, խորհրդատվությունները, քննությունների նախապատրաստումը, գնահատումը և այլն:
15. ՀՀ փաստաբանական դպրոցում դասընթացների առարկայական ծրագրերը պետք է համապատասխանեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և փաստաբանական գործունեություն իրականացնելու կարիքներին:
16. ՀՀ փաստաբանական դպրոցը պարբերաբար պետք է կատարի ուսումնական (պլանների) գործընթացների գնահատում՝ ունկնդիրների շրջանում հարցումներ կազմակերպելու միջոցով: